Ռուբեն Սևակ

Հոգիս

Հիվանդ տերև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն:
Ի՜նչ աղվոր էր գարունը, փափուկ հովեն օրորուն,
Սիրուն խոտերը դաշտին, ծաղիկներն ալ բյուր գույնով,
Կը խնդայի՜ն լռելյայն գաղջ արևին տաք գինով:

Բայց գարնային կենսավե՜տ այդ պահին մեջ օրորուն,
Հիվանդ տերև՜ մը տեսա, կանաչին մեջ դաշտերուն,
Չորցած տե՜րև մը նիհար, որ զեփյուռին հրպումով
Մեռելամերձ կը դողար մարգերուն մեջ ակնաթով:

Սիրտս անհո՜ւն ցավով լի, ես հեռացա սրգահար,
Մատներու մեջ առի զայն ու իր մարմինը նիհար
Գուրգուրանքով, արցունքով մոտեցուցի շրրթունքիս:

Անժամանա՜կ թարշամած գարնան տերև մ'է հոգիս.
Ծաղիկներու մեջ կյանքին, զեփյուռին տակ մայիսի,
Ա՛լ ժըպտալու անկարող, ան կը դողա՜, կը մըսի՜ . . .

Հիվա՜նդ տերև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն . . .